



*Տրեզտա քաղքին արքունի գանձարանը .*

Տրեզտա Սաքսոնիոյ մայրաքաղաքն է . իւրա գետին վրայ՝ Եւրոպայի հռչակաւոր քաղաքներէն մէկն է . ընդարձակ է և գեղեցիկ, և փառաւոր շէնքերով զարդարուած, որոնց մէջ յիշելու արժանաւոր է կամուրջ մը՝ 16 կամարի վրայ շինուած . բազմաթիւ հոյակապ պալատներ կան մէջը . դռեակ մը՝ որ 350 ոտք բարձրութեամբ աշտարակ մը ունի՝ և փառաւոր արքունի գանձարան

մը՝ զոր դիմացի պատկերիդ մէջ կը տեսնաս : Հռչակաւոր են դարձեալ հասարակաց շէնքերը, գրատունները, թանգարանները, հիւանդանոցները և ձեռագործները :

Տրեզտա քաղքին վրայ չափաւոր ընդարձակ տեղեկութիւն մը գրած ենք Բազմավիպիւս 1844 տարւոյն Մայիս ամսուան թերթին մէջ :

